ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2024 թվական N 06-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 24-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ***որոշում է.***

1. Հաստատել «Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մասին» մեթոդաբանական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ք. Երևան

Հավելված

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

2024 թվականի սեպտեմբերի 13-ի N 06–L որոշման

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը՝ որպես պետության հակակոռուպցիոն քաղաքականության մաս, դարձել է ռազմավարական առաջնահերթություն, իսկ կանխարգելման ոլորտում իրականացվող գործունեության ուղղությունների և ծավալի դինամիկ աճով պայմանավորված՝ արդիական է դարձել ոլորտի վերաբերյալ առանձին և ամբողջական վիճակագրության առկայությունը:

2. Սույն մեթոդաբանական ուղեցույցը նախատեսված է կարգավորելու կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման հետ կապված հարաբերությունները՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը և համակարգվածությունը:

3. Սույն մեթոդաբանական ուղեցույցի շրջանակներում օգտագործվող «վիճակագրություն» հասկացությունն օգտագործվում է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված «վարչական տվյալներ» հասկացության իմաստով:

4. Վիճակագրական տեղեկությունների հիմնական օգտագործողներն են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ներգրավված պետական կառավարման

մարմինները, ոլորտային միջազգային կազմակերպությունները, ոլորտային ՔՀԿ-ները, զանգվածային լրատվության միջոցները, ինչպես նաև հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք, բարեվարքության հարցերով կազմակերպիչները, էթիկայի համապատասխան հանձնաժողովները, հանրության ներկայացուցիչները:

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

5. Վիճակագրության վարման հիմնական նպատակն է վերհանել հանրային իշխանության առանձին մարմիններում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ձևավորվող պրակտիկան, ապահովել նորմերի կիրառման միասնականությունը, գնահատել ոլորտի վիճակը և հետագա լավարկման հնարավորությունները:

6. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կիրառվում է առկա իրավակարգավորումների կիրառման արդյունավետության գնահատման, ըստ անհրաժեշտության՝ փորձի վերանայման, համապատասխան առաջարկությունների մշակման, ինչպես նաև ոլորտի զարգացման միտումների բացահայտման նպատակներով:

3. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

7. Վիճակագրության վարման անհրաժեշտությունը պայմանավորված է Հանձնաժողովի և հանրային իշխանության մարմինների գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման պահանջով:

8. Վիճակագրության վարման անհրաժեշտությունը բխում է «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների պահանջներից և Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի ներքո ստանձնած համապատասխան հանձնառություններից:

9. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ Հանձնաժողովի լիազորությունն է ապահովել անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարումը և հրապարակումը: Մինչդեռ, վիճակագրության վարման մեթոդական կառուցակարգեր դեռևս սահմանված չեն: Իրավակիրառ մակարդակում Հանձնաժողովի կողմից նշյալ թեմաների շուրջ վիճակագրական տվյալներն արտացոլվում են հիմնականում Հանձնաժողովի տարեկան և կիսամյակային հաղորդումներում, բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում:

10. Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության առնչությամբ վիճակագրության վարման կառուցակարգեր ևս առկա չեն: Նման պայմաններում հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման շրջանակներում էականորեն բարդանում է զարգացումների վերլուծությունը, մոնիթորինգային ցուցիչների համեմատության անցկացումը, այդ համատեքստում առաջընթացի պարզումը և այլն: Նշվածը խոչընդոտում է նաև նորմերի կիրառման միասնականության ապահովմանը:

11. Բացի այդ, հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների և համապատասխան վարկանիշային զեկույցների շրջանակներում որոշակի պարբերականությամբ անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող վիճակագրական տվյալներ. համապատասխան

վիճակագրության բացակայությունը շատ հաճախ հանգեցնում է նրան, որ մարմինների կողմից փաստացի կատարված աշխատանքները պատշաճ ու միասնական մոտեցմամբ չեն ներկայացվում, ինչը բացասաբար է ազդում նաև գնահատման արդյունքների վրա: Մեթոդաբանության բացակայության պայմաններում տվյալների ներկայացման ոչ միատեսակությունն իր հերթին հանգեցնում է հակասությունների և տվյալների միջև խզումների:

12. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտի վիճակագրության առկայությունը կարևոր է նաև կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված՝ պետության քաղաքականության արդյունավետության գնահատման համար:

4. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

13. Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տրամադրվող տեղեկատվությունն է, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար ձևավորվող էթիկայի հանձնաժողովների կողմից տրամադրվող տեղեկատվությունը:

Համաձայն Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչը վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Էթիկայի հանձնաժողովների լիազորությունները սահմանված են Օրենքի 45-րդ հոդվածով, որի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովները քննում և լուծում են հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները, ինչպես նաև հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ են ներկայացնում իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին:

Հանձնաժողովն, իր հերթին, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակում տվյալներ: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտից հետո՝ երկու ամսվա ընթացքում, Հանձնաժողովը նախորդ տարվա բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը տեղադրում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Այսպիսով՝ բարեվարքության համակարգի վերաբերյալ առանձին գերատեսչություններ վարում են սեփական վիճակագրությունը, իսկ Հանձնաժողովը հանդես է գալիս որպես կենտրոնական դերակատար՝ հանրային ծառայության համակարգում ձևավորված պրակտիկան ամբողջացնելու և ներկայացնելու հարցում:

Առանձին դեպքերում տեղեկատվության հիմք կարող է հանդիսանալ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող՝ քաղաքացիական

ծառայողների շրջանում կանխարգելման դեպքերի վերաբերյալ առկա վիճակագրությունը:

5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

14. Ցուցանիշների կազմման համար հիմնական բովանդակություն են ձևավորում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված բարեվարքության համակարգի տարրերի՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների և նվերների ընդունման սահմանափակումների խախտումների վերաբերյալ տվյալները:

Ընդ որում՝ ցուցանիշները պետք է ներկայացվեն ոչ միայն թվային արտահայտմամբ, այլև պարունակեն տեղեկատվություն առերևույթ խախտումների, դրանց հիմքով հարուցված վարույթների (կամ մերժման հիմքերի), հարուցված վարույթների ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

15. Համակարգի և ոլորտի վերաբերյալ ամբողջական վիճակագրություն ստանալու նպատակով տվյալները պետք է պարունակեն նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից հանրային ծառայողներին և համապատասխան մարմինների հանրային պաշտոն զբաղեցող անձանց տրամադրվող խորհրդատվությունների վերաբերյալ տվյալներ:

16. Մարմինների կողմից ներկայացվող վիճակագրությունը պետք է պարունակի անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների և նվերների ընդունման սահմանափակումների խախտումների, հարուցված ծառայողական քննությունների (այդ թվում՝ եզրափակված, ընթացքի մեջ, քննության չառնված) վերաբերյալ տվյալներ:

17. Ոլորտի վիճակագրական ամփոփ ցուցանիշները Հանձնաժողովի կողմից ենթակա են ներկայացման ՀՀ վիճակագրական կոմիտե՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված ամփոփ վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով՝ տարեկան պարբերականությամբ:

18. Ցուցանիշները լրացվում են մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչի կողմից՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Յուրաքանչյուր նախորդ տարվա վերաբերյալ վիճակագրական տվյալները Հանձնաժողով են ներկայացվում մինչև հաջորդող տարվա հունվարի 30-ը: Վերոգրյալը չի սահմանափակում Հանձնաժողովի կողմից, սույն ուղեցույցի նպատակներից ելնելով, այլ պարբերականությամբ կամ ընթացիկ վիճակագրական տվյալներ պահանջելու և ստանալու հնարավորությունը:

19. Ստացված վիճակագրությունը ներկայացվում է բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում:

6. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴԸ

20. Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների վերաբերյալ թվային ցուցանիշները ներկայացվում են սույն մեթոդաբանության Ձև 1-ով հաստատված ձևաչափին համապատասխան:

21. Սույն ուղեցույցի 20-րդ կետով նախատեսված խախտումների քննությունների, դրանց ընթացքի, արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից տրամադրվող խորհրդատվությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող բաց հարցերով հարցաթերթերի լրացման

միջոցով, որոնք ուղարկվում են սույն ուղեցույցի իմաստով վիճակագրական տեղեկություններ ներկայացնող մարմիններին ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ը:

22. Որոշակի տեղեկատվության՝ սահմանափակ օգտագործման ենթակա հանդիսանալու կամ գաղտնի լինելու հիմքով տեղեկատվության ներկայացումը մերժելու դեպքում ներկայացնող մարմինը պարտավոր է տրամադրել համապատասխան հիմնավորում: Միաժամանակ, Հանձնաժողովն իրականացնում է նաև գաղտնի գործավարություն, ինչով պայմանավորված՝ որոշակի տեղեկության՝ գաղտնի հանդիսանալու դեպքում նշված տեղեկությունը կարող է փոխանցվել/տրամադրվել սահմանված կարգի համաձայն:

7. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

23. Տվյալները հավաքագրվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ ենթակետերի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, ինչպես նաև 6-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա:

8. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

24. Տեղեկատվության հավաքագրումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և բովանդակային ստուգումների, որոնց հիման վրա, ըստ անհրաժեշտության, տեղեկություններ ներկայացնող համապատասխան մարմինների հետ կարող են իրականացվել ճշգրտումներ:

9. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

25. Հանձնաժողովի կողմից վիճակագրության ցուցանիշների ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝

- Հանձնաժողովի կողմից էլեկտրոնային/առցանց հարցաթերթերի շրջանառում,

- հարցաթերթերի հիման վրա տեղեկատվության հավաքագրում/ստացում,

- թվաբանական և բովանդակային ստուգումներ և տվյալների համադրում,

-տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված ձևաթղթերում, կամ, առկայության դեպքում, էլեկտրոնային/թվային հարթակում,

-տեղեկատվության կիրառում ներքին նպատակների համար, այդ թվում՝ տեղեկատվության օգտագործում հաշվետվությունների և զեկույցների շրջանակներում, տեղեկատվության հրապարակում՝ բացառությամբ օրենքով սահմանված՝ հրապարակման ոչ ենթակա տեղեկությունների, Հանձնաժողովի իրավասության շրջանակներում այլ գործողությունների իրականացման նպատակով,

-ամփոփ տեղեկատվության տրամադրում վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին:

10. ԺԱՄԱՆԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

26. Տեղեկատվությունը Հանձնաժողովի կողմից հրապարակվում է տարեկան պարբերականությամբ:

11.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ

27. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման թվայնացումը սահմանված է որպես ռազմավարական նպատակ՝ ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, ինչպես նաև որպես թիրախային գործողություն՝ Ռազմավարության գործողությունների ծրագրով:

Սույն ուղեցույցով նախատեսված՝ վիճակագրության վարման գործընթացը մասնակիորեն ենթադրում է թվային գործիքների կիրառում, ինչպես՝ էլեկտրոնային եղանակով տվյալների ստացումը, մշակումը, հրապարակումը և այլն, այդուհանդերձ, գործընթացի ամբողջական թվայնացման համար անհրաժեշտ է ապահովել վիճակագրական տվյալների ավտոմատ ստացման, դրանց համեմատման, վերլուծության գործիքների առկայությունը, պետական մարմինների տեղեկատվական շտեմարանների միջև փոխգործելիությունը, արհեստական բանականության վրա հիմնված վերլուծական գործիքների ներդրումը և կիրառումը: Վիճակագրության վարման ամբողջական թվայնացումը փոխկապակցված է Հանձնաժողովի թվայնացման տեսլականի հետ, մասնավորապես՝ կարող է իրականացվել Հանձնաժողովի գործերի կառավարման թվային հարթակի ստեղծումից հետո:

12. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄԸ

28. Ռազմավարական հանձնառությունը և կատարողականի թիրախներն անմիջականորեն կապում են վիճակագրության վարումը թվային գործիքների առկայության և կիրառման հետ: Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարումը չի սահմանափակվում բարեվարքության համակարգի առանձին տարրերի վերաբերյալ առկա վիճակագրության ներկայացմամբ, այլ ընդգրկում է նաև Հանձնաժողովի իրավասությունների ներքո գտնվող այլ գործընթացներ՝ ինչպես հայտարարագրերի վերլուծությունը և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը:

29. Բարեվարքության տարրերին առնչվող դեպքերի վերաբերյալ ցուցանիշները Հանձնաժողովի կողմից ստացվում են նախորդ գլուխներով ներկայացված ընթացակարգով՝ էլեկտրոնային որոշ գործիքների միջոցով:

Միաժամանակ, հայտարարագրման և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների ոլորտում արդեն իսկ ներդրված են թվային վիճակագրության վարման համապատասխան գործիքներ.

Մասնավորապես՝ հայտարարագրման համակարգի՝ Հանձնաժողովի նոր կայքէջում (http://cpcarmenia.am) առկա տեխնիկական լուծումների արդյունքում հայտարարագրմանն առնչվող վիճակագրությունը՝ բացի համապատասխան վարույթներից, ամբողջությամբ թվայնացված է: Նոր թվային լուծումները, ի թիվս այլնի, թույլ են տալիս իրական ժամանակում տեսնել՝

- Սահմանված ժամկետում չներկայացված/ժամկետանց հայտարարագրերի թիվը,
- Հայտարարատուների թիվը՝ ըստ տեսակների,
- Հայտարարագրերի ընդհանուր թիվը՝ ըստ տեսակների,
- Այլ տեղեկություններ:

13. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

30. Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություններ՝ իր կողմից սահմանված՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների միջոցով: 2024 թվականի մայիսի 17-ին ուժի մեջ է մտել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-160-Ն օրենքը, որով նախատեսվել է, որ հարցաթերթիկները Հանձնաժողով են ներկայացվում էլեկտրոնային համակարգի միջոցով: Բարեվարքության հարցաթերթիկի թվային գործիքի նախնական տարբերակն արդեն մշակված է (գտնվում է թեստավորման փուլում), այսինքն, գործընթացն ամբողջովին թվայնացված կլինի առաջիկայում:

31. Ընդ որում՝ մինչև վիճակագրության թվային գործիքի գործարկումը բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների ոլորտի վիճակագրությունը վարում է Հանձնաժողովը:

32. Ցուցանիշների կազմման համար հիմնական բովանդակություն են ձևավորում հետևյալ տեղեկություններ՝

- Բարեվարքության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների քանակ,
- Բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացությունների քանակ՝ ըստ տեսակների,
- Հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա անձանց նշանակման դեպքերի քանակ (մարմինների կողմից նշված ցուցանիշի առնչությամբ տեղեկությունները Հանձնաժողով են ներկայացվում կիսամյակային կտրվածքով):

ՁԵՎ 1
(տարեկան)

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐՐԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՔՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

20 ____թ. _____ տարեկան (ներկայացվում է աճողական կարգով)

Հաշվետվության ներկայացման ժամկետը՝ **մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հունվարի 30-ը**

Ներկայացնում է _____
(լրիվ անվանումը)

Կազմակերպական-իրավական ձևը _____

Գործունեության իրականացման վայրի

Մարզը/քաղաք Երևան _____
*Համայնքը*_____

Հասցեն _____ ☐☐☐☐
(փողոցը, շենքը, բնակարանը) *(փոստային դասիչ)*

Փաստացի գործունեության հիմնական տեսակի ծածկագիրը ☐☐☐☐☐
(լրացվում է համաձայն ՏԳՏԴ դասակարգչի)

Պետական հաշվառման համարը ☐☐☐ ☐☐☐ ☐☐☐☐☐☐☐
(լրացվում է համաձայն գրանցման վկայականի)

Նույնականացման ծածկագիրը ☐☐☐☐☐☐☐☐
(լրացվում է համաձայն գրանցման վկայականի)

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) ☐☐☐☐☐☐☐☐

Հեռախոսահամար(ներ) _____
Էլեկտրոնային փոստ _____@_____

Խախտման հիմքը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում եզրափակված ծառայողական քննությունների քանակ (միավոր)	Ծառայողական քննության արդյունքում կիրառված պատասխանատվության միջոցը (տույժի տեսակը) (միավոր)	Ծառայողական քննության հանգամանքները	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ մնացած քննությունների քանակ (միավոր)	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ծառայողական քննության նշանակումը մերժելու դեպքերի քանակ (միավոր)	Ծառայողական քննության նշանակումը մերժելու իրավական հիմքը (հղումը)
Անհամատեղելիության պահանջներ						
Այլ սահմանափակումներ						
Շահերի բախման կարգավորումներ						
Վարքագծի կանոններ						
Նվերների ընդունման սահմանափակումներ						

Ղեկավար՝

Լրացնող (լիազորված անձ)՝

_____ _____

(Ազգանուն, անուն) ***(Ստորագրություն)***

_____ _____

(Ազգանուն, անուն) ***(Ստորագրություն)***

<< _ _ >>_____ ____20_____թ.